ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- դեկտեմբեր 2020 թվականի №---Ա
ք.Երևան

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր 2020 թվականի հուլիսի 27-ի №246Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տվել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի՝ «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին վարձակալությամբ տրամադրման գործարքների կնքմանը՝ միաժամանակ պարտավորեցնելով կնքել դրանք Որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում, և դրանց վերաբերող փաստաթղթերի պատճենները երկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հանձնաժողով,

բ) գործարքները կնքվել են 2020 թվականի օգոստոսի 3-ին, սակայն դրանց պատճենները Հանձնաժողով են ներկայացվել սույն թվականի նոյեմբերի 25-ին: Նշված գործարքների համաձայն՝ վարձակալությամբ տրամադրվել են նաև Ընկերության կողմից ապագայում շահագործվելիք մալուխները,

գ) Հանձնաժողովը, Որոշմամբ սահմանված դրույթների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, Ընկերության նկատմամբ 2020 թվականի դեկտեմբերի 3-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի №ԳԲ/34.1-Մ4-2/4822-2020 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №01-ՄՄ-12/859 գրությամբ ներկայացրել է իր դիրքորոշումը, որի համաձայն՝ վերը նշված գործարքներին վերաբերող փաստաթղթերի պատճենների ուշացումը պայմանավորված է համապատասխան աշխատակցի՝ հեռավար աշխատանքի մեջ գտնվելու հանգամանքով, իսկ գործարքների առարկայի մասով արդեն իսկ վարվում են բանակցություններ «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ՝ դրանց առարկան Որոշմանը համապատասխանեցնելու համար, և, Ընկերությունը, գործարքների լրացուցիչ համաձայնագրերի պատճենները, դրանց կնքումից հետո, կներկայացնի Հանձնաժողով,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 1-ին կետով և 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, մասնավորապես՝ Որոշմամբ համաձայնություն է տրվել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի վարձակալությամբ տրամադրմանը, մինչդեռ վարձակալությամբ տրամադրվել են նաև Ընկերության կողմից ապագայում շահագործվելիք մալուխները, ինչի առնչությամբ Հանձնաժողովի համաձայնությունն առկա չէ, և, գործարքներին վերաբերող փաստաթղթերը, սույն թվականի օգոստոսի 17-ին Հանձնաժողով ներկայացվելու փոխարեն, ներկայացվել են նոյեմբերի 5-ին,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Որոշման 1-ին կետի և 3-րդ կետի 1-ին ենթակետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Որոշման 2-րդ կետում նշված ժամկետում, վերջինիս և «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև 2020 թվականի օգոստոսի 3-ին կնքված գործարքները համապատասխանեցնել Որոշման պահանջներին և ներկայացնել Հանձնաժողով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- դեկտեմբերի 2020թ.